ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԽԱՉԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

գ.Խաչաղբյուր

27.06.2017թ.

N_107_

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ՝ Կ. ԲՈԹՈՅԱՆԻՆ

Հարգելի՝ մարզպետ.

Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուրի համայնքապետարանի 27.06.2017թ-ի ավագանու 5-րդ նիստի թիվ N16 որոշումը:

Առդիր 2 էջ:

Համայնքի ղեկավար՝ Ս. Գալստյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԽԱՉԱՂԲՅՈՒՐԻ ԱՎԱԳԱՆԻ

---

«__27__» ____06____2017թ.

հասցե 1փկ. N 30
հեռ.094-94-87-40

# ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ԽԱՉԱՂԲՅՈՒՐ
# ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ԹԻՎ 5-ՐԴ ՆԻՍՏԻ N 16 ՈՐՈՇՈՒՄԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԽԱՉԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՎԱԳԱՆԻ

գ.Խաչաղբյուր Հեռ. 094948740

27.06.2017թ.

### ՆԻՍՏ N 5

Տեղի ունեցավ Խաչաղբյու գյուղական համայնքի ավագանու հերթական 5-րդ նիստը:

Նիսը վարում էր համայնքի ղեկավար պարոն՝ Սերգո Գալստյանը:

Նիստին մասնակցում էին ավագանու 5 անդամներից երեքը:

Նիստին մասնակցում էին համայնքապետարանի աշխատակիցներ, համայնքի բնակիչներ:

Նիսի օրակարգը բաղկացած էր 1 հարցից:

1 .Համայնքի ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների առավել անմխիթար հատվածները բարեկարգելու մասին:

Զեկուցող՝ Ս.Գալստյան:

Ավագանու անդամները օրակարգը հաստատեցին քվեարկությամբ:

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ: |
|---|---|---|

Տ.Գաբոյան

Ա.Գաբոյան

Գ.Խաչատրյան

Պ.Զաքարյան

Համայնքի ղեկավար՝ Ս. Գալստյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 16

Լսեցին-1 Համայնքի ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների առավել անմխիթար հատվածները բարեկարգելու կարևորության մասին:

Զեկուցող՝ Ս.Գալստյան:

Հաշվի առնելով այն փաստը, որ ներհամայնքային այնպես էլ միջհամայնքային ճանապարհները հիմնականում հողածածկ են, ձյան ու անձրևների պատճառով առաջացել են փոսեր, որոնք դժվար անցանելի են ինչպես տրասպորտային միջոցների այնպես էլ հետիոտնի համար: Փոսալցման համար անհրաժեշտ է խճախառն զանգված: Այդ աշխատանքների կատարման համար առաջարկվեց համայնքի բյուջեից հատկացնել 280000 (երկու հարյուր ութանասուն) հազար ՀՀ դրամ: Ավագանում անդամներից Տ. Գաբոյանը և Գ. Խաչատրյանը իրենց կարծիքը հայտնեցին այն, որ չնայած դրանով համայնքի հողածածկ ճանապարհների վերանորոգման խնդիրը չի լուծվում, սակայն ներկա դժվար անցանելի ջրափոսերի հողալցումն ու հարթեցումը որոշակի ժամանակ բավարար անցանելիություն կապահովի բնակչության համար:

Քննարկումից հետո Խաչաղբյուր համայնքապետարանի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

Համաձայնություն տալ համայնքի բյուջեից հատկացնել 280000 (երկու հարյուր ութանասուն) հազար ՀՀ դրամ ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների առավել անմխիթար հատվածները բարեկարգելու համար:

Ավագանու անդամները որոշումը հաստատեցին քվեարկությամբ:

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ: |
| --- | --- | --- |
| Տ.Գաբոյան | | |
| Ա.Գաբոյան | | |
| Գ.Խաչատրյան | | |
| Պ.Զաքարյան | | |

Համայնքի ղեկավար՝ [signature] Ս. Գալստյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԽԱՉԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

գ.Խաչաղբյուր

28.08.2017թ.

N_126_

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ՝ Կ. ԲՈԹՈՅԱՆԻՆ

Հարգելի՝ մարզպետ.

Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուրի համայնքապետարանի 28.08.2017թ-ի ավագանու 6-րդ նիստի թիվ N17,18 որոշումները:

Առդիր 3 էջ:

Համայնքի ղեկավար՝ Ս. Գալստյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԽԱՉԱՂԲՅՈՒՐԻ ԱՎԱԳԱՆԻ

«__28__» ____08____2017թ.

հասցե 1փց. N 30
հեռ.094-94-87-40

# ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ԽԱՉԱՂԲՅՈՒՐ
# ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ԹԻՎ 6-ՐԴ ՆԻՍՏԻ N 17,18 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԽԱՉԱՂԲՅՈՒՐԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՎԱԳԱՆԻ

գ.Խաչաղբյուր Հեռ. 094948740

28.08.2017թ.

ՆԻՍՏ N 6

Տեղի ունեցավ Խաչաղբյու գյուղական համայնքի ավագանու հերթական 6-րդ նիստը:

Նիսը վարում էր համայնքի ղեկավար պարոն´ Սերգո Գալստյանը:

Նիստին մասնակցում էին ավագանու 5 անդամներից երեքը:

Նիստին մասնակցում էին համայնքապետարանի աշխատակիցներ, համայնքի բնակիչներ:

Նիսի օրակարգը բաղկացած էր 2 հարցից:

1 .Համայնքի միջն. դպրոցի առաջին դասարանցիներին պայուսակներ և գրենական պիտույքների ձեռք բերելու համար գումար հատկացնելու մասին:

Զեկուցող՝ Ս.Գալստյան:

2.Դպրոցի անվճարունակ աշակերտներին դասագրքերի համար ֆինասական օգնություն ցուցաբերելու մասին:

Զեկուցող՝ Ս.Գալստյան:

Ավագանու անդամները օրակարգը հաստատեցին քվեարկությամբ:

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ: |
|---|---|---|

Տ.Գաբոյան

Ա.Գաբոյան

Գ.Խաչատրյան

Պ.Զաքարյան

Համայնքի ղեկավար՝ Ս. Գալստյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 17

Լսեցին-1. Համայնքի միջն. դպրոցի առաջին դասարանցիներին պայուսակներ և գրենական պիտույքների ձեռք բերելու համար գումար հատկացնելու մասին:

Զեկուցող՝ Ս.Գալստյան:

Համայնքի ղեկավարը առաջարկեց , որ կարևոր է, որ առաջին դասարան հաճախող երեխաները (թվով 15 աշակերտ) պայուսակներ և գրենական պիտույքներ ստանան համայնքապետարանի կողմից: Դրանք ձեք բերելու համար անհրաժեշտ է համայնքիմ բյուջեից հատկացնել 200000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:

Քննարկման արդյունքում համայնքի ավագանին

որոշեց՝

Համայնքի բյուջեից հատկացնել 200000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ առաջին դասարան հաճախող աշակերտներին պայուսակներ և գրենական պիտույքներ ձեռք բերելու համար:

Ավագանու անդամները որոշումը հաստատեցին քվեարկությամբ:

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ: |
|---|---|---|
| Տ.Գաբոյան | | |
| Ա.Գաբոյան | | |
| Գ.Խաչատրյան | | |
| Պ.Զաքարյան | | |

Համայնքի ղեկավար՝ Ս. Գալստյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱԶԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 18

Լսեցին- 2.Դպրոցի անվճարունակ աշակերտներին դասագրքերի համար ֆինասական օգնություն ցուցաբերելու մասին:

Զեկուցող՝ Ս.Գալստյան:

Ներկայացվեց որ, համայնքի միջնակարգ դպրոցի մի խումբ աշակերտներ սոցիալական պայմաններից ելնելով չեն կարողանում իրենց դասագրքերի դիմաց վճարումներ կատարել: Այդ հարցով համայնքապետարան են դիմել բազմաթիվ ծնողներ աշակերտներին դասագրքերի դիմաց ֆինանսական օգնություն ցուցաբերելու խնդրանքով :Համայնքի ղեկավարի և ավագանու կողմից ներկայացվեց անվճարունակ աշակերտների ցուցակ, որի ընդհանուր գումարը կազմում է 125000 (հարյուր քսան հինգ հազար) ՀՀ դրամ:

Քննարկման արդյունքում համայնքի ավագանին

որոշեց՝

Համաձայնություն տալ համայնքի միջնակարգ դպրոցի սոցիալապես անվճարունակ աշակերտների դասագրքերի դիմաց որպես ֆինանսական օգնություն համայնքի բյուջեից հատկացնել 125000 (հարյուր քսան հինգ հազար) ՀՀ դրամ: Դասագրքերի դիմաց վճարված աշակերտների ցուցակը փակցնել դպրոցի պատին:

Ավագանու անդամները որոշումը հաստատեցին քվեարկությամբ:

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ: |
|---|---|---|
| Տ.Գաբոյան | | |
| Ա.Գաբոյան | | |
| Գ.Խաչատրյան | | |
| Պ.Զաքարյան | | |

Համայնքի ղեկավար՝ Ս. Գալստյան